

Ք Ս Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպեկով.

Քիֆիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Թմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէրց)

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ. Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Պ Ի Բ Գ Ի Բ Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Քիֆիսի հայոց կուսանաց Անապատը խորին վշտով յայտնելով մայրապետ ԿԱՏԱՐԻՆԷ ՓԱՐՍՎԱԿԱՆԵԱՆ ԻՇԽԱՆԱԶՆՈՒՅԻ ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿ-ԱՐԳՈՒԹԵԱՆԻ

մահը, խնդրում է ազգակիցներին և ծանօթներին՝ չնորհ բերել ամբիջին, որ լինելու է սեպտեմբերի 16-ին, երեկոյան 5 1/2 ժամին, որից յետոյ յուրարկաւորվելու է դէպի Կուսանաց եկեղեցին Իսկ սեպտեմբերի 17-ին, առաւօտեան 10 ժամին, կը լինի ս. պատարագը, որից յետոյ կը յանձնվի Տղին հանգուցեալի մարմնը Խօջիվանքի եկեղեցու դաւթում, Բէհրեթեան մայրապետների շիրմներին կից:

ԲՈՎԱՆԿԱՌՈՒԹԻՒՆ

Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեւիչը—Ներքին Տեսչութիւն. Պրոֆէսոր Անդրէաս Արծրունու գրական գործունէութիւնը. Զեկուցումներ արբեցողութեան դէմ. Նամակ Շուշուց. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Բալախանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀՆՈՒԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Արծրունիները տոնը. Երկրագործը:

ՄԵՆ ԻՇԽԱՆ ՄԻՒԱՅԼԷ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ

Քիֆիսի հայոց ընդունում է իր նախկին փոխ-արքային, Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեւիչին, Ազատարար Ալեքսանդր II Կայսրի օգոստոսիան եղբորը և նրա Բէ-Փորմատորական ծրագրերին գործադրողին Կովկասում:

Միխայիլ Նիկոլայեւիչի փոխարքայութեան շրջանը մի գորագործ է կազմում Կովկասի պատմութեան մէջ: Կոչված լինելով մտցնել նոր խաղաղացած երկրի մէջ կուլտուրական և քաղաքացիական կենսը, պատուաստել Ալեքսանդր II-ի դատաստանական Բէֆորմները կովկասեան հողի վրա, Մեծ Իշխանը անձնատուր եղաւ իր քաղաքակրթական միասնային մեծ եռուսնդով և ոգևորութեամբ և կարճ ժամանակում Կովկասը շատ բաներում կերպարանափոխ եղաւ: Կաշառակերութեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՂՄԸ

(Պատմական ակնարկ) III Գէորգ աղա Արծրունու միայնակ արու դաւաղը—Երեմիան—մովցե 1804 թ.ին Վան քաղաքում և ձու իննը տարեկան հասակում՝ ինոգրների հետ եկաւ Քիֆիս: Գէորգը սուրբ իր որդուն ուսման նախ Քիֆիսի Ազնուականաց անուանված (յետոյ զինապետ) ուսումնարանը, ապա ուղարկեց Պետերբուրգ մի զինուորական վարժարան: Աւարտելով այստեղ իր ուսման ընթացքը, Երեմիան 1823 թ.ին, իր 19 տարեկան հասակում, մտաւ Վ.է.Յ. Գւարդիայի Ուլանսկի ճեղքազուգը Վ.է.Ն.կ.է.թ.ի աստիճանով: 1826 թ.ին նա ստացաւ Վոյնստրա աստիճան և վերադարձաւ Քիֆիս: 1827 թ.ին, պարսից պատերազմի ժամանակ, նա մասնակից էր Աբաս-արաղի, Սարդար-արաղի և Երևանի նուաճումներին գործում: Իսկ հետագայ 1828 թ.ին Օսմանեան պատերազմի ժամանակ՝ Արծրունի գտնվում էր Գանուբեան Ռուսաց բանակում, ուր ստացաւ պ.թ.ը.է.ի կի աստիճան: Այնուհետև երբ իշխան Գոլգորուկովը 1829 թ.ին, առանձին յանձնարարութեամբ, ուղարկվեց Քիֆիս, նա հեռու տարաւ և երիտասարդ սպայ Արծրունուն: Դէկտեմբերին և Քուրբանիցի կաշնագրութիւնների ժամանակ Երեմիան Ռուսաց կողմից նշանակված էր՝ գտնվել պարսից Մահմադ-Միրզա և Թորոլ-Միրզա արքայազնների մօտ, և ապա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՐՕՖԷՍՈՐ ԱՆԿԻՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Պ III Կարծես զգալով որ 1877 թուականը չափազանց հարուստ պիտի լինի քաղաքական անցքերով և պիտի մի նոր, մեծ հարցի սկզբնաւորութիւնը դնէ, «Մշակը» սկսեց հրատարակվել շարաթը երկու անգամ: Յայտարարվեց ուսութիւնը պատերազմը, Կովկասի սահմանները վրա որոտացին լինումները, որոնք նոր, հրային հոսանքներ էին մտցնում օսմանեան փրօտած պետութեան մէջ: Այդ տարին էլ Անդրէաս Արծրունու կենսի մէջ նշանաւոր փոփոխութիւն տեղի ունեցաւ. նա ստացաւ Բերլինի համալսարանում—հանրաբանութեան և կրթութեան պրոֆէսորի պիտակագրեցիտի պաշտօն: Այդուհետև այդ հանդամները, «Մշակը» ասում էր որ Անդրէաս Արծրունին առաջին հայ պրոֆէսորն է այդ ճիւղի մէջ: Ինքը, երիտասարդ պրոֆէսորը, պատասխանելով «Մշակին» ողջունին, ասում էր հետևեալը.

«Թող չը դատապարտեն ինձ հայրենակիցներս, որ ես հետո իմ հայրենիքից ինձ համար մի գործունէութիւն եմ ընտրել և իմ ոյժերս այսպիսով պէտք է, գրե՛ն առ ժամանակ, գործ դնեմ առանց անմիջական օգուտներ բերելու հայրենակից հասարակութեանը: Բայց թող յիշեն որ իմ ընտրած ճանապարհը ամենայն ազգութիւնից դուրս է, որովհետև գիտութիւնը միշտ չազգային է, չը նայելով որ այս կամ այն երկրում նրա զարգացմանը աւելի նպաստում են, քան ի՛նչ մի ուրիշի մէջ, և ինչ որ գիտութեան արդարեւում կատարվում է մի երկրի մէջ, մենակ այն երկրի սեփականութիւնը չէ, այլ նոյնքան պատկանում է և մի այլ երկրին, որ գուցէ ժամանակագործաբար աւելի անաջող պայմանների մէջ գտնվելով, կարող է գիտութեան ճանապարհի վրա համեմատաբար աւելի ընթացք բերել: Իսկ այն գիտութիւնը, որ իմ պարսկականներին առաքելու է, կարող է ժամանակով մեր երկրին դեռ մեծ օգուտներ բերել, աչքի առջև ունենալով երկրի հանրային գանձերը, որոնք ապագայում կարող են մեր երկրի հարստութեան աղբյուր դառնալ: Միւս

կողմից գուցէ և մեր հայրենիքը, որ համեմատաբար չափ քիչ է հետադուրս, գիտութեան համար փոխադարձապէս շատ օգտաւէտ կարող է դառնալ, ներկայացնելով մի դեռ անչափ բայց հարուստ դաշտ, որ արծանի է ուսումնասիրած լինելու: Թող թող արվի ինձ լուսալ, որ ես դեռ ես մի անզամպ անբան երջանիկ կը լինեմ, որ ինձ կաջողվի իմ ոյժերս մեր հայրենիքին նուիրելու և այսպիսով ապագայանելու, որ մեր երկրին պիտանի դառնալ անդադար մշտամտնաբեր առարկայ է և իմ մշտական ձրգտումս:

Եւ դա ճիշտ է: Մինչև վերջն էլ պրոֆէսոր Արծրունին փայտաբույր էր այն միտքը, թէ իրան կաջողվի հաստատվել Կովկասում, բայց հանգամանքները, մասնաւոր հիւանդութիւնը չէին թող տալին նրան իրագործել այդ բաղանջը: Պատերազմը վերջացաւ 1878-ի սկզբին, բայց աւելի ազմակալից և կոնսոլտ հարցեր թողեց զիպլումատիական ճարտիկութեամբ վճռելու Արեւելեան հարցը ամբողջովին իր բարդ և ահաւոր կերպարանով կանգնել էր Եւրոպայի առաջ: Ահաւոր այդ հարցը ամբողջապէս տեղափոխեց Բերլին: Այնտեղ հաւաքվեց միջազգային բարձրագոյն ատենադ, որի լուծման սպասում էին բազմաթիւ դժուար հարցեր: Թիւրքիայի դէմ գառ ունեցողները դիմեցին Բերլին, այնտեղ էր և հայոց պատգամաւորութիւնը: Անդրէաս Արծրունին նորից եռանդով կպաւ իր թղթակցութիւններին: Մի շարք նամակներով մէջ նկարարեց Բերլինի կոնգրեսի գործերը, ամենից շատ ուշադրութեան նուիրելով, ի հարկէ, հայոց հարցին: Լէօ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՐԲԵՅՈՂՈՒԹԵԱՆ ԴԵՄ

Մովսէլյան սեպտեմբերի 9-ին գեմատվոի բժիշկների ժողովում մանրամասն ըննութեան ենթարկվեց արբեցողութեան դէմ մասքառելու խնդիրը: Զեկուցումներ կարդացին բժիշկներ Նախիջևանի, Կոնստանդնուպոլի, Պոզոսեյ, Մինոր և Տոկարսկի: Խնդիրը քննվեց երկու տեսակետից: Նախ՝ հարց յարեցվեց արբեցողութեան ներկայ գրութիւնը աւելի մանրամասնաբար, բնական փաստերով ու վիճակագրական թուրքով լուսարանելու, իսկ միւս կողմից ընդ-

ների պատճառով Արծրունու այս ձեռնարկութիւնը չը յաջողվեց, բայց, եթէ չը չազմեց Երեմիան Ն-ի Զմիւռնիայի եկեղեցուն ուղարկած նըպատը, այս առաջին անգամն էր, որ Քիֆիսեցիք յօգուտ թիւրքահայերի դրամ էին նուիրում: Այսպէս թէ այնպէս, բայց Արծրունու միջամտութիւնը այդ դար գործում Քիֆիսի հայոց ուշադրութեան առարկայ եղաւ: Երբ այնուհետև առաջ եկաւ Ներսիսեան զբարանցի վերանորոթեան խնդիրը և հարկ եղաւ մի նոր կանոնադրութիւն պատրաստել յիշեալ հիմնարկութեան համար, Երեմիան ժողովեց իր շուրջը Քիֆիսի այն ժամանակվայ բոլոր հայ երիտասարդութիւնը, որ արդէն սաստիկ պատերազմ էր մղում հին հոգաբարձուների և Քաթիբեան անուանված կուսակցութեան հետ: Ետտեղ գուցէ կը յիշեն Արծրունու կտրուկ և ազդու ձառերը այն ժամանակվայ հայոց պատգամաւորների ժողովներում: Սակայն նա հասարակութեան սպասածից առաջ հետաքրքիր ժից և հրաժարվեց միանգամայն ընտրվել հոգաբարձու յիշեալ զբարանցի, և այնուհետև ազգային գործերի մէջ այլ ևս չը խառնվեց: Անցան տարիներ և ահա՛ երբ 1867 թ.ին գործադրվեց 1866 թ.ի օգոստոսի 11-ին Բարձրագոյն հաստատած նոր կանոնադրութիւնը՝ Քիֆիսի քաղաքային գործերը կառավարելու մասին, գեներալ Արծրունին ընտրվեց քաղաքագլուխ: Սակայն և այս պաշտօնի մէջ նա երկար չը մնաց և 1868 թ.ին, անձնական հիւանդութիւնը պատճառաբանելով, հեռացաւ: Երեմիան Արծրունին իր կեանքի մեծ մասը անց է կացրել իր կալուածների վերահսկողութեան մէջ և նրանց շինութեամբ: Միմիայն մօտ գտնվող Գէորգ աղայի շինած քարվանսարան

նազանցներն պատժում. բայց նա խօսք է կարող ամեն մի անկանոնութիւն նկատել. դրա համար նա ամեն մի նաւթանգրում կոտորոյ պէտք է ունենայ, որ անտեղի է... Առդակի պարտականութիւնն ընկնում է պ.պ. կառավարիչներին վրա, որ վարչութեան հրատարակած կանոնները չուտարկելով մտցնեն նաւթանգրում և հակեն, որ կանոնները ճշգրտութեամբ գործադրվեն:

Ի վերջոյ ցանկալի է, որ Լեւոնային վարչութիւնը ժամանակ առ ժամանակ կոտորոյ անել տար, թէ ինչպէս են կատարվում հրատարակած կանոնները. բաւական է հրատարակելը, պէտք է և գործադրել տար և աւատացած ենք, որ եթէ Լեւոնային վարչութեան հրատարակած բոլոր կանոնները (մի երկուսի բացառութեամբ) գործադրվին, բանւորների դրութիւնը բաւական բարձր կը լինէր:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, սեպտեմբերի 17-ին, առաւօտեան ժամը 9-ին, Քիֆլիս կը գայ Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկողայեւիչի: Վօկղայում պատուաւոր պահակախումբ կանդնան կը լինի, զինուորական երաժշտութեան խմբի հետ միասին Վօկղայում կը ներկայանան Մեծ Իշխանին թաղաքայրական վարչութեան բոլոր բարձրաստիճան պաշտօնեաները, ազնուականութեան, ջարդար և դանազան հաստատութիւնների ներկայացուցիչները: Վօկղայից Մեծ Իշխանը կը գնայ Քիֆլիսի դաշտը, ուր տեղի կուհենայ զորահանդէս, որից յետոյ կը սրվի նախաճաշ 600 հոգու: Նախաճաշից յետոյ Մեծ Իշխանը կը գնայ կառավարչապետի պալատը. ճանապարհի վրա շարված կը լինեն Քիֆլիս թաղաքի բոլոր պլորոցների աշակերտները և աշակերտուհիները: Նորին Բարձրութիւնը կայցելի զինուորական զինամարտի և միւս կրթական հաստատութիւնները, նոր մայր-եկեղեցին և արքունական թատրոնը:

Վօկղի հեռագրական գործակալութիւնը հեռագրում է Ալեքսից, սեպտեմբերի 10-ից, եւրօպական լրագրներին. «Վասիստի» տեղական բարձր տեխնիկական դպրոցի հանրաքանութեան պրոֆէսոր Արծրունին, Քիֆլիսեցի Լանգուցեալ յայտնի էր իր հետազոտութիւններով աշխարհագրութեան, ազգագրութեան և գլխաւորապէս Ռուսաստանի աշխարհագրութեան շրջանում:

Ներկայումս Քիֆլիսում է գտնվում Մօսկվայի համալսարանի թաղաքատնտեսութեան ամբիոնի պրոֆէսոր Չուպով:

Այս օրերս, Քիֆլիս է եկել կայսերական տան բժիշկ մանկաբարձ Օտտ, որ կը մնայ մեր թաղաքում մի շաբաթ: Նրա Կովկաս գալու գլխաւոր նպատակն է՝ քննել Քիֆլիսի մանկաբարձական ինստիտուտի գործերը: Բժիշկ Օտտ

մաղրութիւնը կորցնում է և մինչև անգամ հիւանդանոց է: «Մեր ուսուցիչը առանց բանելու չէ կարող մնալ», ասում են նրանք այդ դէպքերում: Գիւղի բնութիւնն ու երկրագործական աշխատանքը, սակեւ, իրանց մօտ են բաշտում նրան: Նա այնտեղ, հեռու, բնական զբոսութեան մէջ չէ գտնում իրան. իր տեղում նա այդպէս չէր լինում: Բանից դուրս է դալիս, որ նրա գիւղական բնութեան, տաճանիլի շարքաշրթնութեան մէջ կայ մի բան, մի ծածկված կէտ, որ կայտնում, կաշկանդում է գիւղացուն իր տեղի ու ջրի հետ, իր հող ու արտի հետ, իր տաճանիլի, կարիքներից ծնված ու նրան ծանր թաշտած աշխատանքի հետ: Նկնց այդ բանն է, որ հաշտեցնում է նրան իր բարտի ու կոչման հետ: Այդ բանը չը լինէր, նա ոչ թէ հաղար տարի, որոց հազար օրոց էլ չը դիմանար այն խեղճ, անոյս ու չարքաշ կեանքին, որի մէջ մնացել է մինչև այսօր: Ինչ դիմանալու բան է մի կտոր հացի համար ամբողջ տարին գողար ու հանգիստ չունենալ մինչև վիզը պարզների մէջ խեղճութիւն, ամենքից մուսցված... Կը բեղարբեր, չէր դիմանար: Բայց հիմա դիմանում է, չէ բեղարբեր: Գիմանալու պատճառը էլ իր աշխատանքն է, հողն է, գիւղն է, երկրագործութիւնն է:

Աշխատանքը ոչ միայն գիւղացու յոյան է, այլ հողին էլ նրա մէջն է. աշխատանքով համ նրա փորն է լցվում, համ էլ հողին է սննդում: Նա միշտ միայն հացի ու ապրուստի համար չէ աշխատում. աշխատում է նկնց այնպէս. չէ կարող չաշխատել: Չէ կարող, որովհետև երկրագործական աշխատանքը իր բոլոր ձևերով, յարմարութիւններով ու պատահանութիւններով կանում է և նրա միջոց, իր մէջն է ասուն համարեն նրա

արդէն այցելեց ինստիտուտը և ժողովեց նրութիւր իր ընկնութեան գործը առաջ տանելու համար:

Պրոֆէսոր Չուպովից Անդրկովկասում իր ճանապարհորդութիւնների միջոցին ժողովել է սեանդի դանազան նմաններ և նրանցից մի բանիւր սուել քիմիկոս Ստախովիչին՝ հետազոտելու: Քիմիկան հետազոտութիւնը ցոյց է տալի, որ Անդրկովկասի սեանդը իր մէջ պարունակում է մինչև 8—10% բուսային մասեր կամ գիտութեան մէջ ընդունված խոտքով՝ հուսմունք: Այդպիսի բաղադրութիւն ունի և Ռուսաստանի յայտնի սեանդը:

ԳԱՅՁԱԿԻՑ մեզ գրում են. «Քէպէտ իր ժամանակին հաղորդել էինք, որ ս. Յովհաննէս մայր-եկեղեցու համար ընտրված է նոր երէցփոխ՝ պ. Աբրահամ Իսակեան, և հաշտեաններ՝ պ.պ. Միքայիլ Նաբաթեան, Միսոն-բէկ Բաբաքիսեան և Քրիզոր Բոանակեան, բայց պէտք է խոտովանվեք, որ նորընտիր երէցփոխը միայն անուամբ է երէցփոխ, իսկ գործով... Անն ապացոյց: Երբ պարոնին յայտնում են, որ հաստատված է իր պաշտօնի մէջ, նա ասում է՝ գործակալ բանանալին, որ թղթին ձեռք կը բաշի, բայց պաշտօնի մէջ կը մտնի միայն ամառանոցից գալուց յետոյ, որովհետև ինքն ամառանոց է գնում... Արդեօք կատարած է պարոնին իր պաշտօնի այժմ, ան հարց.— կը պատասխանենք.— ոչ, եթէ կամենում էք լինել երէցփոխ, կանոնք մենք պարոնին, եղբ, ինչպէս հարկաւոր է, իսկ եթէ ոչ, հրաժարվեցէ և սուէք ծիսակահներին իրաւունք ընտրել մի ուրիշին, որը կարողանայ երէց փոխ լինել՝ այդ բաւի բուն նշանակութեամբ»:

ՄԵՂՐԻՑԻՑ մեզ գրում են. «Մի շաբաթ առաջ այստեղ եկաւ պօլիցիական պրիտուք և յայտնեց մեր հասարակութեան, որ կառավարութիւնը 550 ր. նպաստ է նշանակել ժողովրդական դպրոցի բացման համար: Հասարակութիւնն, իր կայացրած վճարով, համաձայնութիւն տուեց առ այժմ միլիոնանոց տարրական դպրոց բանալու, մնացած ծախսերը իր վրա աւանդով»:

ԳԵՐՈՒՍԻՑ մեզ գրում են. «Վափանի մահում գտնվող պղծանքների բոլոր տէրերը մշտադիր են վաճառել իրանց հանքերը անդրկական ընկերութեան: Սկզբնական բանակցութիւնները տեղի ունենալուց յետոյ, անդրկական միակցութեան ընկերութիւնն ուղարկեց Լօնդոնից մեծաներեր պղծանքների յատկութեան և տեղական պայմանների հետ ծանօթանալու: Չորս օր մնալու և բազմակողմանի տեղեկութիւններ քաղելուց, դիտողութիւններ անելուց ու ծանօթանալուց յետոյ՝ նրանք կրկին ուղևորվեցին Լօնդոն: Ապասվում է վերջնական որոշման»:

ամբողջ մտաւոր ու մինչև անգամ բարոյական գործունէութիւնը և նրան, կարծէք՝ բարոյական գործունէում էլ է: «Վանայաբը ինքը որ չը ցանի, աչքը ուրիշի վրա դնի, ուրիշի արտից գողանայ, մայրն ինքնատի, տատ չանի, ցանածը ուտեցնի, կոխկոտնի, պայ այն ինչ այնպէս անի, այն ինչն այնպէս չանի՝ ինչ մարդ է», իրար մէջ շատ անգամ մէկ-մէկու նկատում են գիւղացիք, աշխատողով իրանց աշխարհայեցողութիւնն ու բարոյական հայեացքները յարմարեցնել երկրագործական աշխատանքին ու կարգերին: «Ուրիշ ոչ մի տեղ, բայց երկրագործական աշխատանքից, նրա բազմատեսակ ձևերի ու բարոյութիւնների մէջ, նրա միտքն այնքան ազատ, այնքան համարձակ, այնքան լարված չէ, ինչքան որ այստեղ է—արօրի, տափանի, ոչխարների, հաւերի, բաղբերի, կովերի մօտ և այլն.— ասում է Գէրջ: Ուսպէնակին: Նա համարեա մի բան չի հասկանում իր իրաւունքներից. խելքը չէ կտրում, թէ ինչպէս է առաջ եկել իշխանութիւնը և ինչ բանի համար է նա. չը գիտէ, թէ ինչի համար է սկսվել պատերազմը և որտեղ է գործնվում թշնամու երկիրը և այլն, նրա համար որ նրա ուշքն ու միտքը իր գործի վրա է. նա այնքան ժամանակ չունի, որ իմանայ ու հետաքրքրվի այդ բոլորով...»:

Իր հողի գործից դուրս նա միայն երկու բան գիտէ. մէկ՝ Աստուած վերելք, երկրորդ, մէկ էլ՝ ինչ որ մարդկանց կամբից դուրս է—Աստուծոց է, արև, անձրև, կարկուտ, քամի, ամեն տեսակ ցաւեր, աշոգութիւն ու բախտ—Աստուծոց է դալիս: Իսկ օրին, կառավարին ու մեծութիւնը—թագաւորի բանն է: Երկուսն էլ մարդկանց դատելու համար են. երկուսն էլ հրամայում

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, սեպտեմբերի 5-ին
Սրկու օր առաջ Թաւրիզում կատարվեց մի շատ բտմունքի դրամա: Թաւրիզի հայ առևտրականները՝ Ալեքսան Սարգսեան անունով մի երիտասարդ ամուսնացաւ և հարսանիքի հետեւալ առաւօտը, վաղ, ժամը 5½-ին, իր տան մէջ անձնասպանութիւն գործեց, բէվոյէրի երկու հարուած ուղղելով իր կրծքին: Ահանքի մէջ խիստ հազարդէպ այս ինքնասպանութիւնն ընդհանուր յուզում պատճառեց: Անցքի պատճառն իմանալու հետաքրքրութիւնը ամենքին տալին ու վրա էր արել. բարեբեանք ապա՜ խոր ցաւակցութիւն էին արտայայտում. ինքնասպանի տանը՝ մի օր առաջ տիրող ուրախութիւնից և պարից յետոյ՝ մի օր վերջ դրամայի արհուսացման րեւը նկարագրել անկարելի է: Տնը նասպան հորափեսան Թաւրիզի ժամանակակից ջա Տէլն երի հետ չը չվիզող, ծնողական խրատապահանջ սովորութիւնների ներքեւ ապրող, նեղ մտքերի և հայեացքների տէր մարդ էր և բացարձակ դո՛՛հ է այն ասիական-պարսկական նախապաշարված սովորութիւններին, որոնք վաղուց տիրապետել են Թաւրիզի աւելի լաւ է ասել, պարսկահայերի ընտանեկան կեանքի վրա: Թաւրիզեցու ընդանեկան չըբանում եէն կէ կանաք անհաւատալի ազդեցութիւն ու դերեր են կատարում. որանք հացթուիւններ, հարսանիքի և այլ խնջոյքների հրաւիրող խնդրակներ են տանտիրոջ կողմից. տանտիրուների և հարսնացու օրիորդների վրա երկիւղի և ուրախութեան յայտնի ազդեցութիւնն են գործում այն պատճառով, որ կարող են գործ չինել, գործ բանդել, մինչև գովել—երկիրը բարձրացնել, միւսին պարսաւել—գետնին տալին անցկացնել: Այժմ պարզ է ուրեմն, թէ ինչու եէն կէն մեծ ճեղքանկութիւն, կեղծ սէր ու յարգանք է վայելում թաւրիզեցու ընտանիքից, որոնք կամովին հարկադրված են դրամական յարձաւորութիւն խոտապոյտ պաշտօններ յատկացնել ընչաբայց եէնէնէնին: Խոտախոտութեան և այլ դէպքերում եէնէնէն բացի պաշտօններ վերցնելուց, Մենտորի պաշտօն էլ է կատարում նաև ամուսնական առաջատարին. այստեղ նա իմաստուն է, դեկալար է և յաճախ բուսապետ... Մարդկային օրգանիզմի և ջղային դրութեան ստեղծանքին անձամբ միտայ Ալեքսանի եէնէնէն բուսութիւն գործ դրեց խեղճ երիտասարդի վրա՝ անկարելի արդիւնքի արագ գործադրութեան համար: Այսպիսից, յանդիմանեց երիտասարդի իրանից անկախ անաշուղտութիւնը, և երիտասարդը ահից ու ամօթից ձեռք մեկնեց անգութ դէմքին... Եէնէնէն—այդ զորեւն վճելի գործ գրած եռանդը նրա համար է գլխաւորապէս, որ ժամանակին աչքաբուսանքը տայ ամուսնի ծնողներին և ազգականներին և զլէ մի բանի կօպէկներ... Հարեմական տղիտութեան

յում, պատժում են. երկուսից էլ պէտք է վախենալ. երկուսի սիրուն էլ պէտք է չահել Մէկի համար նա խոնկի մտմ, «թաղախ», մատաղ ու իր գիտեցած «խեղիւն» (բարի գործ) ունի. թագաւորի համար էլ տուրքեր: Երկուսի ուղածն էլ նա պէտք է անտրտունը ու միամիտ սրտով կատարի: Նրանք որ չը լինեն, ինքը հացի տէր չէր լինի. մէկը նրա բերքն է հացնունում, միւսը նրա ունեցածը պաշտպանում գողից ու յախշտակողից: Տող չունեցողին էլ հողը նա է տալիս: Հօղ. ինչքան մեծ բան է սա գիւղացու համար, ով էլ տալու լինի նրան հողը, իրաւ որ Աստուծու չափ պիտի պաշտվի: Նրա կերածը, նրա հացը, նրա հողին, նրա ամբողջ էութիւնը հողի հետ է կապված: Առանց հողի գիւղացին հողի չունի ու չի էլ կարող ունենալ: Ուրիշ ոչ մի բան այնքան լաւ չը գիտէ, այնքան լաւ չէ հասկանում, այնքան մտնի չէ նրա խելքին ու հողուն, ինչքան հողը: Կարելի է ասել թէ նրա խիղճն էլ որոց միայն հողի բաների մէջ է երկում. ուրիշ տեղ, նա կուպիտ, անդալայ, անտարբեր արարած է: Անտարբեր է նոյն իսկ դէպի իր սեփական շահերը, դէպի իր սեփական ցաւն ու օղտում, Նկնց որ դրամը հողի երեսել հետու են լինում, մի քիչ բարձր ու վերացականու: Նա ճանաչում է ամեն մի ծառն ու ծաղիկը և գիտէ օգտվել նրանց յատկութիւններից, երբ իրան հարկաւոր է գալիս: Նրանցից աւելի ճանաչում ու օգտվում է իր լծած ու բանեցրած մայրիկից: Նրանց այնպէս է ճանաչում, ինչպէս իրան. միշտ իմանում է նրանց ցաւն ու վիճակը. օրերով նրանց հետ է անցնում կեանքը, նրանց հետ խոտում, սիրում, գուրգուրում և կամ հրամայում, իր կամքը թելադրում: Եւ ինչպէս չը սիրի նրանց: Նրանք որ չը լինին, ինչ կարող

այս անմեղ գո՛՛նը արեւօք վերջին և զօրաւոր հարուածը կը տայ Թաւրիզի ընտանեկան եղեռնագործ սովորութիւններին: Այս արիւնք պէտք է կարողանայ խորտակել ասիական կապանքները, որոնց հանդուցներում տանջվում է մարդկային և ընտանեկան ազատութիւնը: Մենք լըսեցինք, որ առաջնորդ Սահակ կախողպետ Այվատեանի վրա ճնշող տպաւորութիւն է արել երիտասարդի ինքնասպանութիւնը, և միջոցներ է ձեռք առնելու՝ հայ ընտանիքներում գոյութիւն ունեցող այս օրինակ փոռած սովորութիւնները ջնջելու: W.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են «Temps» լրագրին սեպտեմբերի 7-ից. «Երեքսեանցի գաշակցութիւնը կազմող երեք պետութիւններն արդէն համաձայնութիւն են յայտնել մասնակցել Ռուսաստանի առաջարկած խաղաղութեան կոնֆերանսի: Բայց այն պայմանով, որ պահպանվի հուղային statu quo: Կոնֆերանսայում լինելի վիճաբանութիւնների հիմքը պէտք է լինեն մարդասիրական հարցեր և գլխաւորապէս վնասուրթութիւնների կրճատման խնդիրը:

—Լօնդոնից գրում են, որ հասարակաց կարծիքը հարկադրում է անգլիական կառավարութեան գործել վճուղապէս կրեոտական հարցում: Անգլիական զինուորների ջարդը աւելի սաստիկ տպաւորութիւն է գործել Լօնդոնում, քան բոլոր այն անգլիկութիւնները, որոնք գործվեցին հաղաբար գիւղացիների վրա: Լօրը Սօլբրիւրին այս անգամ հաստատ որոշել է չը դիջել Քիւրբիային և ծովակալ Նօել գործում է համաձայն նրա հրահանգների: Մտակալան անասան լրագործութիւններ ունի. նա կարող է անել ինչ որ կամենայ, բայց, ի հարկի, առաջ դեռ համաձայնվելով մնայած նաւատորմների սկետերի հետ: Գործն այդպիսով սաստիկ բարդվում է և լուրջ դէպքեր կարող են տեղի ունենալ: Եթէ Կանդիս ուժեղանալ, այդ ուժեղանումն սեռտանքը կը լինի թէ մուսուլման և թէ քրիստոնեայ բնակիչների խմբովին ջարդը: Որքան էլ արտաքին գործերի մինիստրութեան մէջ այդ հանգամանք յուզումնք է առաջ բերում, բայց լուրջ Սօլբրիւրին որոշել է վճառապէս գործել և չը խնայել սուլթանին:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի հայերէն լրագրները մի անակնկալ և խոսք նորութիւն բերին: Բանից դուրս է գալիս, որ աստորիական ներկայից կայսրուհին չարադրածի հարուածից չէ մեռել, այլ... յանկարծամահ է եղել: Հաստատեց լինելով որ մեր ընկերցողները կը կարծեն, թէ մենք հանաք ենք անում, բերում ենք վկայութիւններ: Լսեցէք: «Աստորից կայսրուհին որ օգափոխութեան համար ժընէվ կը գտնուէր, շաբաթ օրը մեռաւ: Աւստիկ այս մասին հեռագրական գործակալութիւններու հաղորդած լուրերը. «Փրնէվի 10 սեպտ.—Աստորից Ելիզաւէթ կայսրուհին այսօր Փրնէվի չըբանցող ուղևորութիւն մը կատարած միջոցին մեռաւ: Այս մահը, որ անակնկալ կերպով տեղի ունեցած է, խորին յուզում առաջ բերաւ: Այդ մահը Կ. Պօլսի լրագրներում ամբողջ էջեր է բռնում. հարկաւոր տեղեկութիւններ են տպված, բայց սպանութեան մասին ոչ մի

էր անել. նրա ամբողջ տուրը կրմն է կերակրում. նրա հացը եղն է տալիս. ջրալաց, քաղաք ու ամեն տեղ էլ նրա ձին է հանում. առանց դրանց նա ինչ կարող էր անել. մեռակ մարդը որ մէկին կը հասնէր: «Սըը ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես. իմ թեւ ու թիկունք, դու իմ տան գուռն ես. քեզ որ չունենամ, արտ չեմ ունենալ. կալ էլ չեմ կատիւ. ցորեն ստանալ... Ես ու դուս մին կնք, եղբայր եներ» (Փրնէվի): Այսպէս է ասում ու գուրգուրում գիւղացին իր եզան. ինչքան սէր ու զգացմունք է դեղված դրանց մէջ և ինչքան անկեղծ են ասված դրանք:

Բացի օգուտ տալուց, մայրեն իրանց արածեւրով, ձագերով ու բառաչով մի տեսակ էսթետիկական վայելչութեան տեղ էլ են բռնում գիւղացու համար: Գիւղացիներից իրանցից ենք լսել, որ թաղաքներում մարդիկ «մեղքիկա» ունեն, ժողովվում, լսում, դուրաբանում են. իրանց «մեղքիկա» էլ այդ մալերն են: Երկուսն է, չորս վողմից կովերը բառաչելով յետ են դառնում արօտից. ձագակները լսում են մայրերի ձայնը և ներքից անուշ ու մեղմիկ ձայնակցում են: Անն գուրս են հանում, արձակում են նրանց. վրա են ընկնում կարօտում ու քաղցած ձագակները և մշտապով ծծում: Գիւղացու հայեացքով մի տուն, որ հաւ չունենայ, աքաբը չը կանչի, կովը դռանը չը կանչի, հողիտուլը չը կանչի, ձին չը խրինջայ, չուրը չը հաշի.—ինչ տուն է: Առանց դրանց՝ տունը «չէնըր»—կենդանութիւն չի ունենայ, մեռակ ու փոխուր կը լինի և դուարթութիւն չի ազդի տանեցոյ վրա:

Յ. Մուրադեանց

Ծէրէլէպ (Սուխուէլ շրջան)

